

Handwritten text in Armenian script at the top of the page.

ՏԻՆՉԵՐԱԿԱՆ ԱՌՈՒԲԸ

28

(“ԼԵՐԱՆ ՔԱՐՈՉ”ԷՆ)

ԿՐԺԱԿԱՆԵՅ

ՅԻՍՈՒՄ ՆԱԶՈՒԿՐԵՅԻ

ԲԱԿԱԿՈՐ ԱՐԺԵՐՈՒ

A II
31580



ԸՆԳՕՐԻՆԱԿԵՑ ԵՒ ԸՆԳՂԱՅՆԵՑ

Գ. Ե. Մ.



ՍՏԱՄՊՈՒԼ

1926



ՄԻԵԶԵՐԱԿԱՆ ԱՊՕԹՐԸ

(«ԼԵՐԱՆ ՔԱՐՈԶ»ԷՆ)



«Ա՛յսպէս աղօթեցիք», կ'ըսէր օր մը Յիսուս իր աշակերտներուն.—

Ա

1. Հա՛յր մեր, որ յերկինս ես.

«Ո՛վ մեր երկնաբնակ Հայրը.

2. Սուրբ եղիցի անուն քո:

Թող սրբագործուի՛ քու անունդ:

3. Եկեացէ՛ արքայութիւն քո:

Քու թագաւորութի՛ւնդ թող գայ:

4. Եղիցին կամք քո, որպէս յերկինս՝ ե՛ւ յերկրի:

Թող քու կամքդ կատարուի, ինչպէս երկնքի մէջ՝
նոյնպէս երկրի վրայ:

5. Զհաց մեր հանապազօրդ՝ տո՛ւր մեզ այսօր:

Մեր ամենօրեայ հացը այսօ՛ր ալ մեզի տուր:

6. Թող մեզ զպարտիս մեր, որպէս եւ մեք
թողումք՝ մերոց պարտապանաց:

Ներէ՛ մեզի մեր պարտադանցութիւնները, ինչպէս մենք
ալ կը ներենք մեր դէմ յանցապարտ գտնուողներուն:

7. Եւ մի տանիր զմեզ ի փորձութիւն,
այլ փրկեա՛ զմեզ ի չարէն:

Մեզի հետ եղիր որ փորձութեան մէջ չիյնանք
ու զերծ մնանք չարէն:



ԼԵՐԱՆ ՔԱՐՈՉԸ

Բ

Այսպէս աղօթեցին դարեր շարունակ քրիստոնեայ շրթներ, մերթ հաւատաւորի սրտագին ու ջերմեռանդն շեշտերով, մերթ տարակուսողի տարտամ թոթովանքներով, մերթ նշմարտախոյզ մաքուր հոգիի մը հզօր ներթափանցումով այդ Աղօթքի աստուածային խորհուրդին՝ ուր մարդկային կեանքը կը գտնէ վճիտ ու անսպառ ակնադրելի իր բարձրագոյն նշմարտութիւններուն, եւ մերթ ցամքած սրտի

մը ծոյլ ու մեղկ յօրանջումներով՝ որոնք անատակ կը դարձրնեն միտքը՝ թօթափելու հին ու նոր տգիտութեան, հին ու նոր նախապաշարումներու բիրտ կեղեւանքները եւ յայտ յանդիման տեսնելու տիեզերական գեղեցկութիւնները հրաշակերտող թաքուն մեծ Լոյսը իր անատուեր հառազայթումին մէջ:

Այսպէս պէտք է աղօթէ ամբողջ մարդկութիւնն անխրտիր, եթէ կը ցանկայ— եւ ո՛վ պիտի չցանկար— տեսնել երջանկաւէտ թագաւորութեան մը հիմնարկութիւնը Սիրով ու Բանականութեամբ բաբախող Սիրտերու սերտ ու անբաժան միութեան մէջ:

Այսպէս պէտք է աղօթենք մենք բոլորս՝ որ կարօտը կը քաշենք, «անմռունչ հեծութիւններով» կամ «ըղծածայն հենհերումներով» յաւիտենական գողտր Բնարի մը եւ անկաշառ Կշիռի մը:

Այս անհար գրիչը, իր հաւատքի եւ կոչումի ներշնչած համարձակութեամբը, կը փորձէ զինք լսող «խոնարհ հոգի»ներուն տալ փոքրիկ մէկ ընդլայնումը այդ տիեզերական աղօթքին՝ (աւելին վերապահելով պատեհագոյն առիթի մը) որ սկիզբն ու վախճանն է մեր կեանքի երկինքը լուսակերտող Աստուծոյ արեգակին, խորհրդագեղ կնիքը մեր ծնունդին ու մահուան: Աստուածային Համերգն է այն, ա՛յնքան պարզ ու վսեմ, ուր կը խտանան եւ իրենց ճշմարիտ իմաստը կ'առնեն տիեզերքի բոլո՛ր բոլո՛ր մեներգները:

Խառնե՛նք, ուրեմն, մենք ալ մերինները Անոր հետ. պայմանով որ արիութիւնն ու իմաստութիւնն ունենանք նախապէս ներդաշնակաւորելու բոլոր յատակ ու հնչեղ թրթրութեանները մեր սրտին, մտքին ու մարմինին, մեր հոգեկան ու Ֆիզիքական տաճարի շքեղ կառուցուածքին՝ որուն վրայ «մեր երկնաւոր Հայրը» իր անեղծ ու կենդանի դրոշմն է դրեր:

Ահա՛ այդ ընդլայնումը:

ԸՆԴԼԵՅՆՈՒՄ

1. Ո՛վ մեր Հայրը. հայրը՝ աստուածային սիրովդ եղբայրակցած և Քեզ որդիացած բովանդակ մարդկութեան. Դուն՝ որ մեր մտքի հասողութիւնը գմբեթաւորող անհասերկնքին չափ բարձր ես, անհուն ու վսեմ Քու էութեամբդ և ստեղծագործեր ես Տիեզերքն իր անսպաւակ լրութեամբը, իր հրաշալի խորհուրդներովն ու յայտնութիւններովը.

2. Թող յիշատակովդ օծուած ու ներկայութեամբդ լուսազարդուած մեր սրտերու խորերէն բխող օրհնութիւններով՝ սրբաբանուի՛ Քու վեհ անունդ, որպէս զի Քու Սօսքիդ, — Բարիին, Ճշմարտին և Գեղեցկին, — եռաւիռքեկան բարձր ու մաքուր յարացոյցին (idéaլ), — ներշնչումովը սրբուինք և՛ մենք:

3. Թող արդարութեան և ճշմարտութեան վրայ հիմնուած Թագաւորութիւնդ, պտղաբեր խաղաղութեամբ և անխառն երջանկութեամբ աստիճանաբար կատարելագործելի, ներուժութեամբ և արտածաւալումով իրականանայ վեր վեց ու վեր վիցոցով:

4. Քու արարչագործ կամքդ, տիեզերքը անվրիպելիօրէն ղեկավարող մեծ ու անյեղլի Օրէնքին մէջ յայտնուած, Թող յայտնուի նա՛և Քու գործդ նմանատպելու և յաւերժացնելու հետամտող մեր կամքին՝ մեր իմացական, բարոյական և Ֆիզիքական լաւագոյն ընդունակութիւններու ամբողջական ու ներդաշնակ միութեանը մէջ, աննիւթական պատկերիդ կնիքովը դրոշմուած մեր նկարագրին մէջ,

մարդկութիւնը ընկերային տիպար և Քու համայնախնամ շունչովդ կենսաւէտուած կարգուսարքով մ'օժտելու համար՝ մեր ի սպաս դրած բոլորանուէր և այլասիրական գործունէութեան մէջ :

5. Մեր ֆիզիքական գոյութիւնը, մեր գերազանց Յարացոյցի հետապնդութիւնը հնարաւորող միջոցը, երաշխաւորող անհրաժեշտ պայմանները լրացնելու համար՝ գործօն կեանքով մը թող մշտանորոգուին գերագոյն Սկիզբէդ բխած և բնութեան միջոցով մեզի տրուած մեր բնական ոյժերը՝ որոնցմով պիտի կարենանք կատարել նաև մեր բարոյական բոլոր պարտականութիւնները :

6. Երբ մենք մեր իրաւունքներուն մէջ զեղծանինք և մեր պարտականութիւններուն մէջ զանցառու գտնուինք, անգիտակցարար կամ որոշ գիտաւորութեամբ, — ինչ որ մեր անկատարութեան հետեւանք՝ խիստ հաւանական մէկ պատահականութիւնն է, — Գու, մեր խղճի հզօր մէկ ցնցումովն ու ինքնանդրադարձումովը ցոյց տուր թէ ներած ես մեզի մեր ակամայ կամ կամայ այդ մեղանշումը, պարտազանցութիւնը : Ներողամտութեան նոյն ոգիով ներշնչուիլ ու վերաբերուիլ մարդկային ընկերութեան օրինազանց անդամներուն՝ մեր եղբայրներուն հանդէպ, ջանալով ամէն կարելի միջոցներով ազատել զանոնք բարոյական գայթակմաներէ և անկումներէ, մեր նուիրական ու հրամայական պարտականութիւնը կը նկատենք և՛ մենք :

7. Հովանաւորէ՛ զմեզ, չսայթաքելու համար մեր ընկերային-բարոյական կեանքի շաւիղին մէջ, հայրախնամ տեսչութեանդ զօրութեամբ՝ որ ներկայ է մեր բանականութեան, ճշմարտութիւնը չափող և ընտրող մեր խմացական կարողու-

թեան, իմաստութեան, հանճարի և գիտութեան լոյսովդ
 ջահաւորուած մեր մտքին մէջ. այսպէս՝ թոյլ տալով որ
 մենք Քեզմով կարողանանք սանձահարել նաև Բարիին դէմ
 ընդվզող մեր բնազդական բոլոր յոռի հակամիտութիւնները,
 ջնջել ընկերային աններդաշնակ իրաւակարգի մը անխուսա-
 փելի արդիւնքը եղող դարաւոր այդ ժառանգութիւնները:

*
 * *

Ասիկա աղօթքն է այն բիւրեղացած հոգիներուն՝ որոնք,
 զերծ անձնամատոյց կրաւորականութեան մը մոլորանքէն,
 Աստուծոյ հետ իրենց սրտագին խօսակցութեան մէջ կը
 գտնեն ինքնաթելադրութեան ստեղծագործ մեծ զօրութիւնը
 եւ դէպ ի գործ մղող անսպառ կորովը:

Չէ՞ որ անհրաժեշտ է

«ԱՅՍՏԵՂ ԳՈՐԾԵԼ ԳՈՐԾՆ ԱՍՏՈՒԾՈՅ»


որպէսզի

«ԱՅՆՏԵՂ ՀԱՆԳՉԻՆՔ ՀԵՏ ԱՍՏՈՒԾՈՅ» (Շնորհալի):

Բողոքիդ հաւար արսակց աղօթող
Գ.ԱՐԵԳՒՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ
 Տրապիզոնի

A II
 31580

25 Մարտ 1926 Ղաղաթիս
 Ս. Լուսաւորիչ եկեղեցի



~~104.~~

31580

158
50

BOOK	NO
158	
PL	P. 50

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220031580

Aⁿ
31580

